

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Ռուզաննա Մուրադյանի, Հերմինե Նաղդայանի, Վահրամ Բաղդասարյանի, Արմեն Մխիթարյանի, Կարինե Պողոսյանի, Հեղինե Բիշարյանի, Արտակ Դավթյանի, Նաիրա Զոհրաբյանի, Շուշան Պետրոսյանի և Արծվիկ Մինասյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-532-23.05.2014-ԳԿ-010/0) վերաբերյալ:

Ներկայացված օրենքի նախագիծն ընդհանուր առմամբ ընդունելի է: Միաժամանակ առաջարկում ենք օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1.1-ին կետից հանել «համապատասխան» բառը, իսկ «կրթական հիմնական» բառերը փոխարինել «հիմնական կրթական»

բառերով՝ հիմք ընդունելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը:

Ինչ վերաբերում է օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1.2-րդ կետին, հայտնում ենք, որ այն առնչվում է կրթության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների բազմաթիվ հոդվածներին, և «կրթության որակ» հասկացության՝ օրենքով սահմանումն այս պահին նպատակահարմար չէ: Առաջիկայում նախատեսվում է կրթության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքներում կատարել ծավալուն փոփոխություններ, որոնց քննարկումների շրջանակներում կարելի է անդրադառնալ «կրթության որակ» հասկացության սահմանման հարցին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանը:

Ներկայացված օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմինն օրենքի նախագծի 1-ին հոդվածի 1.2-րդ կետով նախատեսված կրթության որակի գնահատման չափանիշները կսահմանի օրենքի ընդունումից հետո վեցամսյա ժամկետում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ուղղակիորեն կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ նախատեսվում է հստակեցնել կրթության ոլորտում առավել հաճախ կիրառվող որոշ հասկացություններ:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է կրթության ոլորտում կիրառվող որոշ հասկացությունների հստակեցմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է սահմանել «սովորող» և «կրթության որակ» հասկացությունները:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կունենա չեզոք ազդեցություն, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեի ելքերի փոփոխման չի հանգեցնի:

Պ-532-23.05.2014-ԳԿ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-րդ եւ 1.2-րդ եւ կետերով.

«1.1) սովորող՝ սահմանված կարգով ուսումնական հաստատություն ընդունված եւ համապատասխան կրթական հիմնական ծրագրով ուսումնառող անձ.

1.2) կրթության որակ՝ կրթական քաղաքականությամբ սահմանված նպատակների եւ խնդիրների իրագործմանը միտված կրթության կազակերպման չափելի արդյունք, որը գնահատվում է հաշվի առնելով սովորողի անհատական կարիքները, կրթության կազմակերպման միջավայրը, ուսուցման ծրագրային բովանդակությունը, կրթության կազմակերպման գործընթացը եւ ուսումնառության գնահատված արդյունքները: Կրթության որակի գնահատման չափանիշները՝ ըստ թվարկված ուղղությունների, սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության պայմանավորված է կրթության ոլորտում առավել հաճախ կիրառվող որոշակի հասկացությունների օրենսդրական հստակեցման միտումով: Օրենքի նախագծով սահմանվում են «սովորող» եւ «կրթության որակ» տեմինները:

Խնդիրն այն է, որ կրթությանն առնչվող գրեթե բոլոր փաստաթղթերում խոսվում է կրթության կազմակերպման արդյունավետության եւ որակյալ արդյունքի մասին: Մինչդեռ դրանք ենթադրում են կոնկրետ իրողություններ, ցուցանիշներ, որոնք պետք է համապատասխանեն տվյալ հասարակարգի նպատակներին ու պահանջներին: Ընդհանուր առմամբ երբ փորձում ենք մեկնաբանել կրթության որակը, ենթադրում ենք համապատասխան հանրակրթական կամ մասնագիտական կրթության պետական չափորոշի նվազագույնի ապահովում: Սակայն որակի ցուցանիշները ժամանակի զարգացումներին զուգընթաց փոխվում են: Երբեք որակ չի նշանակել անթերի կրթություն եւ շրջանավարտ, որի կրթությունը կազմակերպվել է «գիտելիքատվության» պայմանով եւ տրված ծավելները յուրացնելը երեխայի լուծելիք խնդիրն է: Որակյալ կրթություն նշանակում է, որ տվյալ երկիրը կրթության միջոցով կարողանում է հիմնականում հասնել իր սահմանած նպատակներին, իսկ մանկավարժական աշխատողները կարողանում են սովորողին հասցնել սահմանված արդյունքներին: Օրենքի նախագծի համար հիմք է ընդունվել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի մոտեցումները, որը սահմանում է կրթության որակի հինգ ուղղություններ՝ սովորողի անհատական կարիքները հաշվի առնելը, միջավայրը, ուսուցման բովանդակությունը, գործընթացը եւ արդյունքը: Դրանք ուղղություններն են, որոնցից յուրաքանչյուրը ենթադրում է որակի տվյալ բաղադրիչի գնահատման համապատասխան չափանիշներ:

Այս եւ մյուս ձեւակերպումների համար հիմք է ընդունվել Կրթություն բոլորի համար հռչակագիրը եւ մի շարք այլ կոնվենցիաներ: Նախագծի մշակման ընթացքում ուսումնասիրվել են ՀՀ-ում ընթացող բարեփոխումների շրջանակում ընդունված փաստաթղթերը, միջազգային փորձը եւ անկախ փորձագետների կարծիքները:

Օրենքի նախագծի ընդունման արդյունքում հնարավոր կլինի առավել չափելի դարձնել կրթության որակի, կրթության մասնակիցների (սովորողի) եւ կրթության գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացումը, ծրագրերի իրագործումը եւ արդյունավետության գնահատումը: